COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE
Committee of Ministers
Comité des Ministres

Եվրոպայի խորհուրդ
Նախարարների կոմիտե

Նախարարների կոմիտեի RecChL(2009)4
Հանձնարարականը Հայաստանում Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ Եվրոպական Խարտիայի կիրառման առնչությամբ

(Ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2009 թ սեպտեմբերի 23-ինՆախարարների տեղակալների 1066-րդ նիստում)

Նախարարների կոմիտեն՝

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ Եվրոպական Խարտիայի Հոդված 16-ի համաձայն,

Նկատի ունենալով Հայաստանի կողմից 2002թ. հունվարի 25-ին ներկայացված հայտարարագրերը,

Ուշադրության առնելով Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ Խարտիայի Փորձագետների կոմիտեի տված գնահատականը,

[Ուշադրության առնելով Փորձագետների կոմիտեի զեկույցի բովանդակության վերաբերյալ Հայաստանի իշխանությունների մեկնաբանությունները,]

Հիշելով, որ գնահատականը հենվում է Հայաստանի ազգային զեկույցում ներկայացված տեղեկատվության, Հայաստանի իշխանությունների տրամադրած լրացուցիչ տեղեկատվության, Հայաստանում օրինականորեն հիմնված մարմինների – միությունների ներկայացրած տեղեկատվության – «ի տեղվույն» այցելության ընթացքում Փորձագետների կոմիտեի ձեռք բերած տեղեկատվության վրա[a]

Հանձնարարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է հաշվի առնեն Փորձագետների կոմիտեի բոլոր դիտողությունները – առաջարկությունները – որպես առաջնահերթ խնդիր

1. մշակեն համակարգված քաղաքականություն[a] մատչելի դարձնելու բավարար քանակի ուսուցիչների պատրաստումը – արդիական ուսումնական նյութերի առկայությունը ասորերենով, եզդիերենով – քրդերենով,

2. երաշխավորեն դատարաններում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը – տեղեկացնեն դատարաններին – հանրությանը Խարտիայի 9-րդ Հոդվածի պահանջներից բխող իրավունքների – պարտականությունների մասին,

3. միջոցներ ձեռք առնեն բարելավելու համար ասորերենի – հունարենի առկայությունը ռադիոյով – ասորերենի, եզդիերենի – քրդերենի առկայությունը հեռուստատեսությամբ,

4. պարզաբանեն, Հայաստանում կա՞ն արդյոք տարածաշրջանային կամ փոքրամասնությունների այլ լեզուներ[a] բացի Հայաստանի վավերացման փաստաթղթում նշվածներից: